# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ<br>07.10.2024 17:12:31 | Ծրագիրը ոչ թե սոցիալական աջակցություն է տրամադրում, այլ իրականացնում է ռեաբիլիտացիա, ի շրջանակներում չի կարող իրականացնել նշված գործառույթները: | Նախագծի հիմնավորման մեջ հստակ սահմանվում է նպատակը և ակնկալվող արդյունքը, ըստ որի՝ «Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ներդնել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերի իրականացման իրավական հիմքը, որը համապատասխանելու է ՀՀ գործող օրենսդրությանը, ինչի արդյունքում կիստակեցվեն թե՛ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | բովանդակությունը, թե՛ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրն իրականացնող մարմնի գործառույթները, թե՛ արդյունավետորեն կիրականացվեն ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց կրկնակի զոհականացումից պաշտպանելու համատեքստում:» | |
| 2 | «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ<br>07.10.2024 17:12:08 | Բռնարարները հիմնականում շատ լավ ընկեր, հարևան և գործընկեր են, բայց տանը կիրառում են բռնություն: Այս ծրագրի նպատակը բռնարար վարքի հաղթահարումն է: Վերասոցիալականացման գործընթացը իրականցվում է փակ հաստատություններում գտնվող բռնարաների հետ, որոնք մեկուսացված են ժամանակավոր հասարակությունից: | Առաջարկը լրացուցիչ հստակեցման և հիմնավորման կարիք ունի, հասկանալի չէ այս ձևակերպումը՝ «Վերասոցիալականացման գործընթացը իրականացվում է փակ հաստատություններում գտնվող բռնարարների հետ, որոնք մեկուսացված են ժամանակավոր հասարակությունից:» , միևնույն ժամանակ հարկ է նշել, որ և նախագծում և հիմնավորման մեջ մանրամասն անդրադարձ է | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կատարվում նախագծի նպատակին, նշելով, որ «Սույն ծրագրի հիմնական նպատակն է կանխել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված ընտանեկան և կենցաղային բռնության ցանկացած դեպքերի կրկնումը՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին վերասոցիալականացնելու միջոցով»: Իսկ ինչ վերաբերում է Ձեր այն դիտարկմանը, որ «Այս ծրագրի նպատակը բռնարար վարքի հաղթահարումն  է», փորձագիտական հանրույթի հետ քննարկման արդյունքում, ըստ անհրաժեշտության Ձեր կողմից նշված վերջին ձևակերպումը ևս կներառենք նախագծի կարգավորման նպատակի դաշտում: | |
| 3 | «Կանանց | Բռնարարի հետ աշխատող կառույցը պետք | Անհրաժեշտ է հստակեցնել, թե | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աջակցման կենտրոն» ՀԿ<br>07.10.2024 17:11:24 | տեղեկություն տրամադրի ոստիկանության և աջակցության կենտրոնին: Ոչ մի քննարկում չի կարող այս պարագայում արդյունավետ լինել: | սույն դիտարկումը նախագծի ո՞ր կետի վերաբերյալ է արվել: | |